

## Արա Գաբրիէլյան

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ,  
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

### ԾԱՅՐԱՅԵԴ ԱՆԴՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը քրեական իրավունքի հմագույն ինստիտուտներից է: Ավելի արժեքավոր բարիքը պաշտպանելու նպատակով պակաս արժեքավոր բարիքին վնաս պատճառելու հնարավորությունը նախատեսվում էր դեռևս հորմեական իրավունքում: Դին հօրոմեական իրավունքը թույլ էր տալիս ուրիշի գույքին սպառնացող վտանգի դեպքում ինքնակամ վերցնել այն, կամ հրդեհի դեպքում քանդել տունը և այլն: Ծայրահեղ անհրաժեշտության սկզբունքները կիրառվում էին հարկադիր գործարքների հարցերում, պարտականությունները կատարելու անհնարինության կապակցությամբ: Բայց ծայրահեղ անհրաժեշտության ընդհանուր օրենսդրական բնորոշում հօրոմեական իրավունքում գոյություն չուներ:

Ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտն ավելի բովանդակալից կարգավորվում էր միջնադարյան կանոնական իրավունքում: Կանոնական իրավունքում ծայրահեղ անհրաժեշտությամբ արդարացվում էին այնպիսի արարքներ, ինչպիսիք են պատշաճ իրադրության բացակայության պայմաններում հոգևորականի կողմից ծիսակատարություն իրականացնելը, եկեղեցական կանոններով արգելված սննունդ ընդունելը, երրումը խախտելը և այլն: Կյանքի պաշտպանության համար իրավաչափ էր համարվում օտարին պատկանող յուրաքանչյուր բարիք վնասելը, յուրաքանչյուր պարտականություն խախտելը: Սահմանված արգելքները ծայրահեղ անհրաժեշտության վիճակում խախտելու համար նախատեսվում էր պատժից ազատում կամ դրա մեղմացում: Պատժի մեղմացում էր նախատեսվում այն դեպքերում, երբ հանցանքը կատարվում էր վախի ազդեցության ներքո: Կարիքից դոդված գողությունը պատժվում էր միայն այն դեպքում, երբ կատարվում էր բազմից: Կանոնական իրավունքում մշակվեցին և գործողության մեջ դրվեցին այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են «կարիքը օրենք չի իմանում», «այն ինչ արգելված է օրենքով, թույլատրելի է դարձնում անհրաժեշտությու-

նը», «անհրաժեշտությունը օրենք չի իմանում, և ինքն է օրենք ստեղծում»<sup>1</sup>:

XVII դարում Եվրոպայում ծագում ու ձևավորվում է մարդու բնական իրավունքների հայեցակարգը: Այդ գաղափարախոսության ազդեցության ներքո տեղի է ունենում ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտի հետագա զարգացումը: Ծայրահեղ անհրաժեշտության հարցերին անդրադառնում են Յ. Չրոցիսը, Ս. Պուֆենդորֆը, Յ. Վոլֆը և այլք: Այս հեղինակները ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարված արարողները բացատրում էին մարդկային բուլությանը: Եթե անհրաժեշտության ճնշումը հասնում է ծայրահեղ աստիճանի և ծանր կացությունից դուրս գալու այլ ելք չի մնում, քան խախտել օրենքը, ապա դա առաջացնում է «բնության մաքուր օրենքի» գործողություն, որն իր հերթին նպաստում է սկզբնական բնական իրավունքի վերածննդին:

Յ. Չրոցիսը գտնում էր, որ մարդու ուժերից վեր է մշտապես ծեռնապահ մնալ օրենքը խախտելուց: Բնության անխուսափելի պահանջներով պայմանավորված հանցավոր ակտերը չպետք է պատժվեն: Նա գտնում էր, որ եթե մարդը գրկված է իր կյանքը այլ կերպ փրկելու հնարավորությունից, ապա կարող է մեկ ուրիշի նկատմամբ բռնություն գործադրել, թեկուզ վերջինս մեղավոր չէ այդ իրավիճակի համար: Մարդու այդ իրավունքը, ըստ Յ. Չրոցիսի, բխում է բնության կողմից նրան տրված իրավունքից<sup>2</sup>:

Գերմանացի իրավագետ Ս. Պուֆենդորֆի ծայրահեղ անհրաժեշտության տեսությունը հիմնականում ընդգծում է ինքնապահպանման բնագդի կարևորությունը: Նրա կարծիքով, օրենսդիրը, նորմերը սահմանելով, առաջին հերթին հոգում է մարդկանց բարեկեցության մասին, միևնույն ժամանակ հաշվի՝ առնելով մարդկային բնությունը, որը հարկադրում է մարդուն ամենուրեք, որտեղ վտանգ է սպանում, փրկություն փնտորել: Ծայրահեղ անհրաժեշտությունը պետք է միշտ հաշվի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատեգորիկ արգելված է: Պուֆենդորֆը առաջիններից էր, ով խսուեց մեկ մարդու կյանքը մյուսի կյանքը զոհելու միջոցով փրկելու մասին: Նա գտնում էր, որ, եթե օրինակ նավարեկյալը, իր կյանքը փրկելու համար բռնվում է տախտակից, որի վրա միայն մեկ մարդ կարող է

<sup>1</sup> Ст. 1 Энциклопедия государства и права. В Зм. / под ред. П.И. Стучки, Т. 2. М., 1930, № 423:

<sup>2</sup> Ст. Розин Н.Н. О краине и необходимости. СПб 1999, № 66:

տեղավորվել, իսկ մեկ ուրիշը նույնպես ցանկանում է բարձրանալ այդ տախտակի վրա, ապա լիովին իրավաչափ կլինի, եթե առաջինը հրի և տախտակից ցած նետի նրան<sup>1</sup>:

Նույն կարծիքին էր Յ. Թոնագինին, ով գտնում էր, որ հակազդելով վտանգին՝ մարդը հետևում է բնության կանչին: Մարդը իրավունք ունի վնասելու մեկ ուրիշի բարիքը, եթե դա իր փրկության միակ միջոցն է<sup>2</sup>:

XVIII-XIX դարերում ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը քննարկվում էր իրավունքի փիլիսոփայության շրջանականերում: Ֆիխտեի, Շեգելի, Կանտի աշխատություններում այն դիտվում էր որ-պես քրեական իրավունքի հիմնարար ինստիտուտ:

Ծայրահեղ անհրաժեշտության վերաբերյալ Ֆիխտեի տեսությունը հիմնվում էր այն իրադրության գնահատման վրա, երբ դրա մասնակիցներից մեկը պետք է մահանա, հակառակ դեպքում մահը սպառնում է երկուսին: Ֆիխտեն գտնում էր, որ նման դեպքերում այն սուրբեկտը, որը իր կյանքը փրկելու համար կսպանի մյուսին, ենթակա չէ պատասխանատվության, որովհետև բացակայում են պատասխանատվության պայմանները: Ֆիխտեի կարծիքով իրավահարաբերությունները կարող են առկա լինել միայն համատեղ գոյակցության հնարավորության դեպքում, իսկ եթե համատեղ գոյակցությունն անհնար է, ապա իրավակարգի իշխանությունը վերանում է: Նման իրադրություննում մեկ ուրիշին վնաս պատճառելը թեև օրինական չէ, բայց և հակահրավակական էլ չէ: Ուստի ծայրահեղ անհրաժեշտությունը իրավունքի տեսանկյունից չեզոք արարը է<sup>3</sup>:

Կանտը ծայրահեղ անհրաժեշտությունը համարում էր ոչ թե «կարիքի իրավունք», այլ թույլատրվող բռնություն այն անձի նկատմամբ, որը ոչ մի վտանգ չի ներկայացնում: Ընդ որում, բռնությունը այս դեպքում թույլատրելի է ոչ թե օրբեկտիվ, այլ սուրբեկտիվ հիմքերով: Եթե տախտակից բռնված նավարեկյալը իր կյանքը փրկելու համար հրում է այդ նույն տախտակից բռնվել ցանկացող մյուս նավարեկյալին, ապա ոչ մի քրեական օրենք չի կարող այդ անձին սպառնալ պատժով, որովհետև ոչ մի պատիժ նրա վրա որևէ ազդեցություն չի կարող ունենալ: Նույնիսկ մահապատիժը չի կարող մահ-

<sup>1</sup> Ст. Паше-Озерский Н.Н. Необходимая оборона и краиняя необходиомость. М., 1962, էջ 131:

<sup>2</sup> Ст. Розин Н.Н., նշված աշխ. էջ 72:

<sup>3</sup> Ст. Паше-Озерский Н.Н. էջ 133:

վան անմիջական սպառնալիքի ազդեցության ներքո գործող անձին հետ պահել իր արարքից<sup>1</sup>:

Դետագայում ծայրահետ անհրաժեշտության ինստիտուտը վերլուծության ենթարկվեց ու մշակվեց եվրոպացի քրեագետների կողմից:

Գերմանացի իրավագետ Կարլ Բինդնագը ծայրահետ անհրաժեշտության բնութագրիչ հատկանիշ էր հաճարում իրավական բարիքների միջև առկա կոնֆլիկտը, որի դեպքում մի բարիքի պաշտպանության համար անհրաժեշտ է զոհաբերել մյուսը: Ընդ որում, ծայրահետ անհրաժեշտության վիճակում կատարված արարքը ոչ ցանկալի, բայց հարկադրաբար կատարված արարք է, որի համար քրեական պատասխանատվություն նախատեսելն անհնաստ է<sup>2</sup>:

Բինդնագի հայրենակից Իերինագը նույնպես գտնում էր, որ ծայրահետ անհրաժեշտության իրավիճակին բնութագրական է շահերի բախումը, իրավունքի կողմից պաշտպանվող բարիքների միջև հականարոտությունը, որի դեպքում նախապատվությունը պետք է տալ ավելի արժեքավորին և պաշտպանել այն՝ մյուս բարիքը զոհաբերելու միջոցով<sup>3</sup>:

Այսպիսով, ծայրահետ անհրաժեշտության վիճակում կատարված արարքի անպատճելիությունը կամ իրավաչափությունը հիմնավորելիս, քրեական իրավունքի տեսաբանները հիմնվում են կամ սուրբեկտիվ, կամ օբյեկտիվ չափանշի վրա:

Սույկետիվ չափանիշը ենթադրում է, որ ծայրահետ անհրաժեշտության վիճակում նարդու մեջ ծագում է այնպիսի հոգեվիճակ, որը նրան կարծես թե անմեղսունակ է դարձնում: Խոսքը հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ առկա է մահվան անմիջական սպառնալիք:

Օբյեկտիվ չափանիշը ենթադրում է, որ ծայրահետ անհրաժեշտության վիճակում առկա է իրավական բարիքների միջև կոնֆլիկտ, որի ընթացքում նախապատվությունը տրվում է ավելի արժեքավեր բարիքն: Ուստի ավելի արժեքավոր բարիքը պաշտպանվում է պակաս արժեքավորը զոհաբերելու միջոցով:

Պետք է նշել, որ սուրբեկտիվ չափանիշի վրա հիմնված ծայրահետ անհրաժեշտության հայեցակարգը չի բացառում օբյեկտիվ չա-

<sup>1</sup> Ст. История философии права. СПб., 1998, № 180:

<sup>2</sup> Ст. Розин Н.Н., Нշված աշխ. № 82:

<sup>3</sup> Ст. Розин Н.Н., Нշված աշխ. № 133:

փանիշի վրա հիմնված ծայրահեղ անհրաժեշտության գոյությունը:

Ներկայում շատ երկրների քրեական օրենսդրություններում ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը կարգավորվում է թե՝ օբյեկտիվ, թե՝ սուբյեկտիվ չափանիշների հիմնան վրա: Այս քրեական օրենսդրություններում օրենսդրական կարգավորում են ստացել ծայրահեղ անհրաժեշտության երկու տեսակ՝ արարի հակահրավականությունը բացառող և մեղքը բացառող: Արարի հակահրավականությունը բացառող ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը հիմնվում է օբյեկտիվ չափանիշի վրա, իսկ մեղքը բացառողը՝ սուբյեկտիվ չափանիշի վրա: Կան երկրներ, որոնց քրեական օրենսդրությունները հիմնված են բացառապես սուբյեկտիվ չափանիշի վրա:

Այսպես, ԳՖՀ քրեական օրենսգրքի § 34-ով կարգավորվում է հրավաչափ ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը: Իրավաչափ ծայրահեղ անհրաժեշտությունն առկա է այն դեպքում, երբ պաշտպանվող բարիքի արժեքավորությունը զգալիորեն գերազանցում է զոհաբերված բարիքի արժեքավորությունը: Նույն օրենսգրքի § 35-ով կարգավորվում է մեղքը բացառող ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը: Վերջինս առկա է այն դեպքում, երբ անձը իր կամ իր մերձավորների կյանքին, առողջությանը կամ ազատությանը անմիջականորեն սպառնացող վտանգը կանխելու համար հակահրավական արարը է կատարում: Դակահրավական արարը ասելով՝ այս դեպքում հասկացվում է պաշտպանվող բարիքին հավասար կամ նույնիսկ ավելի մեծ վնաս պատճառելը<sup>1</sup>:

Իտալիայի քրեական օրենսգրքի 54-որ հոդվածի համաձայն՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակն առկա է այն դեպքում, երբ իրեն կամ ուրիշին անմիջականորեն սպառնացող ծանր վնասը կանխելու համար անձը վնաս է պատճառում օրենքով պաշտպանվող բարիքին: Ընդ որում, ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանների մեջ նշվում է, որ պատճառված և կանխված վնասների միջև պետք է համաչափություն լինի, բայց չի պահանջվում, որ պատճառված վնասը անպայման ավելի փոքր լինի, քան կանխվածը<sup>2</sup>:

Ծվեյցարիայի քրեական օրենսգիրքն ընդհանրապես ոչինչ չի ասում պաշտպանվող և վնասվող բարիքների արժեքավորության մա-

<sup>1</sup> Ст. Уголовное законодательство зарубежных стран. М., 1999, № 260:

<sup>2</sup> Ст. Уголовное право зарубежных стран. М., 2003, № 536:

սին: Օրենսգրի 34 հոդվածում պարզապես նշվում է, որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակն առկա է, եթե գործի հանգամանքներից ելնելով՝ անձից չեր կարելի պահանջել զոհաբերելու վտանգի ենթարկված իրեն պատկանող բարիքը<sup>1</sup>:

Խսպանիայի քրեական օրենսգրի 21 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում: Ընդ որում, իրավաչափության պայմաններից մեկն այն է, որ պատճառված վնասը չպետք է գերազանցի կանխվածին: Այլ կերպ ասած, չի պահանջվում, որ պատճառված վնասը ավելի փոքր լինի, քան կանխվածը. այն կարող է նաև հավասար լինել: Միևնույն ժամանակ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով արարոք կատարել է ուժեղ սարսափի ազդեցության տակ<sup>2</sup>: Ակնհայտ է, որ ուժեղ սարսափի ազդեցություն է թողնում, օրինակ, մահվան անմիջական սպառնալիքը, և նման դեպքերում սպառնացող վտանգին հավասար կամ նույնիսկ ավելի մեծ վնաս պատճառելը քրեական պատասխանատվության չի հանգեցնում:

Կարծում ենք, որ ոչ միայն օրյեկտիվ, այլև սուրյեկտիվ չափանիշների հիման վրա ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտի կարգավորումը ավելի ճիշտ է, և թույլ է տալիս անբողջությամբ իրագործելու ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: ՀՀ քրեական օրենսգրքում ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը կարգավորվում է միայն օրյեկտիվ չափանիշի հիման վրա, ինչը որոշ դեպքերում կարող է հանգեցնել անարդարացի, անհիմն դատական ակտերի կայացման: Օրինակ՝ եթե դեկավարվենք նիայն օրյեկտիվ չափանիշով, պապ այն մայրը, որը իր երեխայի կյանքին ամնիջականորեն սպառնացող վտանգը կանխելու համար կզոհաբերի ուրիշի կյանքը՝ ենթակա է քրեական պատասխանատվության: Մինչդեռ, կարծում ենք, որ նման դեպքերում չի կարելի մորից պահանջել զոհաբերելու իր երեխային: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի Շվեյցարիայի քրեական օրենսգրի 34 հոդվածի արդեն մեջբերված ձևակերպումը, որտեղ նշվում է, որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակն առկա է, եթե գործի հանգամանքներից ելնելով՝ անձից չեր կարելի պահանջել զոհաբերել վտանգի ենթարկված իրեն պատկանող բարիքը:

<sup>1</sup> Տե՛ս Սպառնալիքի կոդեքս Շվեյցարիա. Մ., 2001, էջ 13:

<sup>2</sup> www.law.edu.ru. Սպառնալիքի կոդեքս Իսպանիա.

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքում ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը կարգավորել թե՝ օրյեկտիվ, թե՝ սուբյեկտիվ չափանիշների հիման վրա և ծայրահեղ անհրաժեշտության ներկայումս առկա բնորոշման հետ միասին նախատեսել նաև սուբյեկտիվ չափանիշի վրա հիմնված ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը։ Ընդ որում, կարծում ենք, որ սպառնացող վտանգին գերազանցող վնասի պատճառումը կարող է թույլատրելի լինել միայն մահվան աննիշական սպառնալիքի դեպքում, եթե վտանգ է սպառնում անձի կյանքին, կամ նա բոլոր հիմքներն ունեցել է կարծելու, որ իրեն այդպիսի վտանգ է սպառնում։ Մնացած դեպքերում թույլատրելի պետք է լինի միայն հավասար վնասի պատճառումը։ Այնուամենայնիվ սրանք հարցեր են, որոնք հետագա ուսումնասիրության ու քննարկման կարիք ունեն։

**Ara Gabuzyan**

*Head of the YSU Chair of Criminal Law, Doctor of Legal Sciences, Professor*

## **SOME ISSUES OF THE DEVELOPMENT OF THE INSTITUTE OF EXTREME NECESSITY**

The institute of extreme necessity is discussed in the article. While analyzing the lawyers` and philosophers` views, as well as criminal legislations of some countries on the institute of extreme necessity, the author concludes that the main criteria for proving the lawfulness or unpunishability of extreme necessity are based either on objective or subjective aspects, or on both of them simultaneously.

The concept of extreme necessity based on the subjective criteria doesn't eliminate the concept of extreme necessity based on objective criteria. The author gives the preference to the regulation of the institute of extreme necessity based both on objective and subjective criteria as the latter ones create the grounds for the full realization of the principle of criminal responsibility according to the fault. The Criminal Code of Armenia regulates the institute of extreme necessity based only on the objective criteria. This regulation sometimes leads to the issuance of unfair or unjustified court decisions. Thus the author suggests regulating the institute of extreme necessity in the Republic of Armenia Criminal code based both on objective and subjective criteria and together with the institute of extreme necessity based on objective criteria foresee also the institute of extreme necessity based on subjective criteria.